

Մ  
509

10.07.07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԴՈՒՇ ԱՂԻԿԻ ՄԱԿԻՉՅԱՆ

«ԽՈՒՄԲ 47»-Ի ԳԵՂԱՐՎԵՏՍԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ  
ՀԱՆՆ ՎԵՐՆԵՐ ՈՒՆՏԵՐԻ ԱՐՁԱԿԸ

Ժ. 01.07- «Արտասահմանյան գրականություն»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Արա Հրաչիկի Առաքելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր Ելենա Վլադիմիրի Կառաբեգովա քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիանա Ապրեսի Սաֆարյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ – ռուսական (սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 12:30-ին ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ, 15

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար քանասիրական գիտությունների թեկնածու՝ Ս. Ա. Մարգարյան

ՄԱՐԳԱՐՅԱՆ  
Ս. Ա.  
11-509

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է «Խուճբ 47» գրական միավորման գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգի և՛ դրա հետ կապված, միավորման հիմնադիր Հանս Վերներ Ռիխտերի արձակ ստեղծագործության ուսումնասիրությանը: 20-րդ դարի սկզբից գերմանական գրականությունն իր նորագույն շրջանում աննախադեպ վերելք է ապրել. սկսած Թոմաս Մանից, Ֆրանց Կաֆկայից, Հերման Հեսսեից: Սակայն նացիոնալ սոցիալիզմի իշխանության գալու տարիներից գերմանական գրականության մեջ սկսվեց լճացում: Տաղանդաշատ գրողների մեծ մասն արտագաղթեց եվրոպական այլ երկրներ կամ Ամերիկա, իսկ նրանք, ովքեր մնացին Գերմանիայում, ստիպված էին կամ հանդուրժել և հաշտվել ֆաշիստական բռնակարգի հետ, կամ անցնել «ներքին արտագաղթի»:

Պատերազմի տարիներին ամերիկյան գերության մեջ հայտնված մի խումբ երիտասարդ ու առաջադեմ գրողներ որոշեցին տպագրել մի գրական-հասարակական ամսագիր, որտեղ պետք է տպագրվեին գերության մեջ հայտնված կամ համակենտրոնացման ճամբարներ ընկած հայրենակիցների կյանքի ու խնդիրների մասին պատմող գրական և հրապարակախոսական նյութեր: Այս գրական փորձերն իրենց թեմատիկայով և գաղափարական ուղղվածությամբ զգալիորեն տարբերվում էին էմիգրացիայում ստեղծագործող գերմանացի գրողների գործերից, սակայն, նրանց բոլորի նպատակը մեկն էր՝ պայքար նացիոնալ սոցիալիզմի բռնակարգի դեմ:

«Խուճբ 47»-ը հանդիսացավ այն գրական կամուրջը, որը կապեց 20-րդ դարի առաջին կեսի գերմանական դասական գրականությունը ետպատերազմյան նոր գրականության հետ: Այսպիսով, այս գրական խմբի գործունեության շնորհիվ հիմնականում պահպանվեցին գերմանական գրականության լավագույն ավանդույթները: Նոր ժամանակները նոր պահանջներ դրեցին երիտասարդ սերնդի տաղանդավոր գրողների առջև: Վերջիններս, հենվելով դասական ավանդույթների վրա և ընդառաջ գնալով ժամանակի պահանջներին, նոր էջ բացեցին գերմանական գրականության մեջ: Փաստորեն, «Խուճբ 47»-ի գրողների շնորհիվ դրվեց ամբողջ արևմտագերմանական գրականության հիմքը: Հենց այդ խմբի գաղափարական մոտեցումները, գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգը կողմնորոշիչ հանդիսացան արևմտագերմանական գրականության զարգացման համար:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ժամանակակից գերմանական գրականությունը դժվար է ամբողջովին և լիարժեք պատկերացնել առանց իմանալու դրա ակունքներն ու գաղափարական արմատները: Արդի գերմանական գրականության բոլոր ժանրերն իրենց արմատներով գնում են դեպի հետպատերազմյան ժամանակաշրջան, այսինքն «Խուճբ 47»-ի գրական և հասարակական վերելքի

չրջանը: Ժամանակակից խոշորագույն գերմանացի գրողների մեծ մասն, այդ թվում Նոբելյան մրցանակի դափնեկիրներ Հայնրիխ Բյուլը, Գյունթեր Գրասն, այն համոզմունքն են արտահայտում, որ առանց «Խումբ 47»-ի գործունեության չեն պատկերացնում արդի գրական զարգացումները: Գրական այդ խումբը ոչ միայն կատարեց իր վրա դրված պատմական առաքելությունն, այլև «վերակենդանացրեց» և նոր շունչ տվեց ամբողջ հետագա գրական գործընթացին: Հանս Կեյսեր Ռիխտերի, Վոլֆգանգ Բորխերտի, Ալֆրեդ Անդերշի, Հայնրիխ Բյուլի, Գյունթեր Գրասնի և Խմբի անդամ այլ անվանի գրողների ստեղծագործությունները կանխորոշեցին գերմանական գրականության առջև կանգնած հիմնական խնդիրները և հետագա զարգացման օրինաչափությունները:

Գերմանալեզու գրականագիտության մեջ «Խումբ 47»-ի գրական և գաղափարական-գեղագիտական գործունեությանը տարբեր ժամանակների անդրադարձել են Է.Ֆուրը, Զ.Հեմփել-Քյուրթերը, Կ.Գուլվազը, Վ.Հելմիխը:<sup>1</sup> Նշված գրականագետների գործերում գերմանական գրականության պարբերացման մեջ «Խումբ 47»-ի, ինչպես նաև 1940-50-ական թվականների գրականությունը չի առանձնացվում, այլ դիտվում է 1930-60-ականների գրականության ընդհանուր համատեքստում:

Խորհրդային՝ իսկ դրանից հետո նաև ռուս գրականագիտության մեջ, «Խումբ 47»-ի գործունեությունն ավելի շատ կարեկցանքի արձագանք էր գտնում: Յու. Արխիպովի, Վ.Դեմկևիչի, Ի. Ֆրադկինի, Ի. Մլեչինայի<sup>2</sup> աշխատանքներում «Խումբ 47»-ը ներկայացվում է որպես երիտասարդ գրողների խմբավորում, որը «փորձում» է ինչ-որ փոփոխություն մտցնել Գերմանիայի հասարակական և գրական կյանքում: Այս կարծիքի հետ չենք կարող համաձայնել, քանի որ դա սոսկ փորձ չէր. փոփոխությունները, որոնք տեղի ունեցան ինչպես Գերմանիայի հասարակական-քաղաքական, այնպես էլ

<sup>1</sup>Eckhard F., Geschichte der Deutschen: Eine Chronik zur Politik, Wirtschaft und Kultur von 1945 bis heute. – Frankfurt am Main; Leipzig: Insel, S. 1993.-295 Gullvag K., Der Mann aus den Trümmern: Wolfgang Borchert und seine Dichtung. –Karin Fischer Verlag, Achen 1997. -S.122

Helmich W., Wege zur Prosadichtung des 20.Jahrhunderts. –Berlin: Georg Westermann Verlag, 1960.- S.269

Hempel-Küter Ch., Germanistik zwischen 1925 und 1955.: Studien zur Welt der Wissenschaft am Beispiel von Hans Pyritz, Oldenburg, Akademieverlag 2000. – S. 350

<sup>2</sup> Млечина И., Литература и общество потребления, Западногерманский роман 60-х- начала 70-х годов М.,Худож,1975,стр. 239;

Фрадкин И., Реставраторы орла и свастики. О неофашистской литературе в ФРГ. М., 1971;стр. 153

Девекин В., Не сгоревшие на костре. Немецкая антифашистская литература 1933-1945 годов. М., Сов. писатель, 1979, стр. 437

Архипов Ю., Биография и характер юного жанра. Концерт для четырех голосов. М., 1972, стр. 5-25

գրական և մշակութային կյանքում, այնքան մեծ էին և կարևոր, որ հիմք հանդիսացան մի կողմից գերմանական նոր գրականության, մյուս կողմից՝ ժողովրդավարական սկզբունքների հաստատման համար:

Մեր գրականագիտության մեջ «Խումբ 47»-ի գրական և հասարակական գործունեությունն, ինչպես նաև Հ.Վ. Ռիխտերի ստեղծագործությունները երբևէ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել: Հայերեն լեզվով թարգմանվել է Ռիխտերի «Մի սպանաներ» վեպն, ինչպես նաև Բյուլի և Գրասնի լավագույն գործերը:

Մեր ատենախոսությունն առաջին փորձն է ուսումնասիրելու այն կարևորագույն անցումային շրջանը, որը ոչ միայն լուծեց իր առջև դրված հրատապ գրական-հասարակական խնդիրներն, այլև հիմք հանդիսացավ արդի գերմանական գրականության զարգացման համար:

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՌԻՒՄԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան «Խումբ 47»-ի գրողների գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգն է և այդ համատեքստում, Հ.Վ.Ռիխտերի արձակ ստեղծագործությունը:

Ատենախոսության հիմնական նպատակը «Խումբ 47»-ի անդամ գրողների ստեղծագործությունների գաղափարական, սյուժետային և թեմատիկ առանձնահատկությունների քննությունն, ինչպես նաև այդ Խմբի գեղարվեստական ու գեղագիտական սկզբունքների արտացոլումը Խմբի գաղափարական առաջնորդ և հիմնադիր Հ.Վ. Ռիխտերի արձակ ստեղծագործության մեջ:

Նշված նպատակն առաջ է քաշում հետևյալ խնդիրները.

-Բացահայտել այդ գրական միավորման պատմական և գրական արմատները, դրա ստեղծման նախադրյալները:

-Վերլուծել այդ գրական միավորման անդամ-գրողների գրական ժառանգությունը, նրանցից յուրաքանչյուրի գեղարվեստական համակարգը, գրական-գեղագիտական սկզբունքների և մոտեցումների յուրահատկությունները:

-Քննել նրանց ներդրումն, ինչպես այդ գրական խմբավորման, այնպես էլ ամբողջ գերմանական գրականության հետագա զարգացման գործում:

-Ուսումնասիրել այդ գրական Խմբի հիմնադրույթների և գրական սկզբունքների արտացոլումը Հ.Վ.Ռիխտերի արձակ գործերի մեջ:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ԿԻՐՈՒՄԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կատարված է գրականագիտական ուսումնասիրության պատմահամեմատական, տիպաբանական և պատմամշակութային մեթոդներով: Առանձնակի տեղ է հատկացված գերմանական գրականության ավագ և նոր սերունդների միջև եղած կապերի և տարբերությունների ուսումնասիրությանը:

Աշխատանքի մեջ տեղ գտած նյութերը կարող են գործածվել նոր և նորագույն գերմանական գրականության հետ կապված ուսումնասիրություններում: Դրանք կարող են օգտագործվել նաև ՉՖՀ գրականությանը նվիրված դասախոսություններում և մագիստրոսական հատուկ դասընթացներում:

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԸ

Աշխատանքը կատարվել է ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնում, քննարկվել է ամբիոնի նիստում և երաշխավորվել պաշտպանության: Ատենախոսությունում առաջադրված դրույթներն առանձին հոդվածներով տպագրվել են ԵՊՀ-ի, ԵԹՊԿ-ի և այլ գիտական ժողովածուներում, ներկայացվել են տարբեր գիտաժողովներում:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, զերկայացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ համառոտ կերպով ներկայացվում են գերմանական մախապատերազմական և հետպատերազմական գրականության մեջ եղած կապերը, հիմնավորվում են թեմայի ընտրությունն ու արդիականությունը, գիտական նորույթն, առաջադրվում են ատենախոսության նպատակն ու խնդիրները:

#### ԳԼՈՒԽ I

#### ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ «ԽՈՒՄԲ 47»-Ի ՍՏԵՂԾՈՒՄԸ

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո գերմանացիներից շատերն, ովքեր անցյալում կուրորեն հավատացել էին նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսներին, հավանություն էին տվել նրանց արկածախնդիր ծրագրերին ու գործողություններին, այժմ հուսալքված ու վախեցած փորձում էին հասկանալ, թե որն էր իրենց սխալը, մեղքը: Փորձում էին իմաստավորել տեղի ունեցածն, ինչից էլ պետք է ծնվեր ապագան, ապրելու հույսը, հավատը: Հենց գերմանացի գրողներն էին, որ առավել պարզորոշ էին տեսնում ժողովրդի «պահանջարկը», և դրանով պայմանավորված՝ իրենց առջև դրված խնդիրները:

Թվում էր, թե հետպատերազմյան Գերմանիայում գրողների առաջամարտիկները կդառնան արտագաղթից հայրենիք վերադարձած ավագ սերնդի փորձաշատ, տաղանդավոր ու անվանի գրողները: Բայց 1940-ական թվականների երկրորդ կեսին պարզ դարձավ, որ շուրջ մեկ ու կես տասնամյակ հայրենիքից դուրս ապրելով, նրանք կորցրել էին կապը Գերմանիայի, նրա

ժողովրդի հետ և անկարող էին հասկանալ բոլոր նրանց, ովքեր ապրել էին նացիզմի լծի տակ, տարել դաժան պատերազմի գրկանքները:

Սա էր պատճառը, որ նացիոնալ-սոցիալիզմի տապալումից հետո գերմանական գրականության առաջամարտիկները դարձան ոչ թե էրիխ Մարիա Ռեմարկը, Հերման Հեսսեն, Թոմաս ու Հայնրիխ Ման եղբայրները, կամ համաշխարհային ճանաչում գտած մյուս արվեստագետներն, այլ մինչ այդ ընթերցողներին անծանոթ երիտասարդ գրողներն՝ առաջին հերթին «47»-ի ներկայացուցիչները և նրանց հարողները:

Առաջին «հարծակումը» ծեռնարկվեց թերևս «մոզական ռեալիզմ» գրական հոսանքի ներկայացուցիչների կողմից, որոնք «Խումբ 47»-ի գրողներին մեղադրեցին իրականության բուն էության մեջ չխորանալու, դրա փոխարեն իրականությունն ուղղակիորեն ու մակերեսայնորեն վերարտադրելու մեջ: «Խումբ 47»-ի անդամները ևս հիացած չէին «մոզական ռեալիզմի» ներկայացուցիչների կողմից կյանքի ու աշխարհի երկակի պատկերմամբ, ինչպես նաև այն սկզբունքով, որը «47»-ի հիմնադիր Հանս Վերներ Ռիխտերը շարադրեց իր «Գրականությունը և միջթագավորությունը» (1947) հոդվածում, որտեղ «մոզական ռեալիզմի» կողմնակիցներին մեղադրում էր իրականությունից կտրված լինելու, իրականության կամայական գտման ու պատրանքայնության մեջ:<sup>3</sup>

Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո գրական ասպարեզ մտած տաղանդաշատ երիտասարդ գրողների հետ մեկտեղ, որոնցից շատերը միավորվեցին «Խումբ 47»-ում, Գերմանիայում շարունակում էին ստեղծագործել ավագ սերնդի ներկայացուցիչները՝ Գյունթեր Վայդենբորնը, Գոթֆրիդ Բենը, Էրնստ Յունգերը, Հերման Կազակը, Հանս Հենի Յանը, Հանս Էրիխ Նոսակը, Շտեֆան Անդերսը և այլոք:

Արևմտագերմանական ավագ սերնդի՝ «ներքին արտագաղթի» գրողներին զուգահեռ Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո սկսեցին ստեղծագործել մի շարք տաղանդաշատ երիտասարդ գրողներ, որոնք 1947 թվականին միավորվեցին և ստեղծեցին «Խումբ 47»-ի անվանմամբ գրական խումբ: Այս խմբի հիմնադիրը դարձավ Հանս Վերներ Ռիխտերը:

Ետպատերազմյան ժամանակաշրջանում «լավատեսական պաթոսով» գրված մի շարք ցածրակարգ ստեղծագործություններ, որոնց հեղինակները որևէ կապ չունեին «ներքին» և «արտաքին» արտագաղթի հետ, և ովքեր իրենց հայտարարում էին «չեզոք» գրողներ, չարդարացրեցին ընթերցողների սպասելիքները: Սա այն ժամանակահատվածն էր, երբ շարքային գերմանացի դուրս գալով տանից տեսնում էր միմիայն ավերակներ, երբ դեռ չէին սպիացել որդիների ու ամուսինների մահը սզացող մայրերի վերքերը:

Դրանով էր պայմանավորված, որ գրականության մեջ առավել մեծ պահանջարկ ունեցող ու արդիական թեման պատերազմն էր. գերմանացի շարքային գիևվորի ճակատագիրն, այն «փոքրիկ մարդու» ճակատագիրը, որին հաճախ իր կամքին հակառակ քշել էին ռազմաճակատ, ով՝ հոգնած,

<sup>3</sup>Der Ruf, 1947, H.15, S. 108

հուսալքված ու պարտված վերադառնալով հարազատ օջախ, մի նոր, առավել մեծ «ցնցում» էր ապրում: Հայրական տան փոխարեն նրան դիմավորում էին ցեխի ու փոշու մեջ շաղախված, ծխացող փլատակները, հարազատների փոխարեն նրանց դիմավորում էին ուրվականներ հիշեցնող, այս ու այն ավերակի տակից դուրս եկող կիսաքաղցած կանանց, երեխաների ու ծերերի անտարբեր, երբեմն նույնիսկ թշնամական հայացքները: Երիտասարդությունը զուր վատնած, առողջությունը կորցրած կամ հաշմանդամ դարձած, պարտված զինվորն այժմ ոչ մեկին պետք չէր, և ոչ ոք չէր հետաքրքրվում նրա ճակատագրով: Ստեղծված իրավիճակը դժվարին խնդիրներ էր դնում երիտասարդ սերնդի գրողների առջև: Առաջին հերթին անհրաժեշտ էր ուրվագծել այն թեմատիկ շրջանակը, որը համահունչ կլիներ «կոտրված» հասարակության սպասումներին, կկարողանար հանել նրանց այն ծայրահեղ հուսալքվածության և շոկային վիճակից, որում նրանք գտնվում էին: Անհրաժեշտ էր գտնել «արագ արձագանքման» այն ժանրային ձևերը, որոնք կպատասխանեին այսօրվա երևույթներին, հրատապ խնդիրներին:

Խոսելով հետպատերազմյան տարիների իրականության մասին՝ Հանս Վերներ Ռիխտերը ցավով նշում է. «Մեր ժամանակի տարբերիչ առանձնահատկությունները փլատակներն են... Նրանց մեջ աճում է ոչ թե ռոմանտիկայի երկնագույն ծաղիկն, այլ ավերումի, տարալուծման, Ապոկալիպսիսի դիվային ուժը: Փլատակներն ապրում են մեր մեջ, իսկ մենք նրանց մեջ: Դրանք մեր իրականությունն են, որն իր մարմնավորումն է պահանջում»:<sup>4</sup>

Հանս Վերներ Ռիխտերը և ամերիկյան ռազմագերիների ճամբարում գերության մեջ գտնվող մի խումբ օժտված գերմանացի երիտասարդ գրողներ համատեղ որոշեցին իրենց բախտակից ընկերների համար ստեղծել ամսագիր, որի առաջին համարը՝ «Դեր Ռուֆ» («Կոչ») անվամբ լույս ընծայվեց 1945 թվականի մարտ ամսին: Պատերազմի ավարտից հետո ամսագիրը սկսեց հրատարակվել Մյունխենում:

Մյունխենյան «Դեր Ռուֆը» կարճ ժամանակում մեծ ճանաչում ձեռք բերեց հետպատերազմյան Գերմանիայում: Հետագայում ամերիկյան զինվորական գերատեսչությունը փաստորեն արգելեց ամսագիրը:

«Դեր Ռուֆից» հեռացած իր գործընկերների հետ Ռիխտերը 1947 թվականի գարնանը կազմակերպեց գործընկերների հանդիպումը Բանվալդգե փոքրիկ ավանում: Բանվալդգեում հաջորդ սեպտեմբերյան հանդիպման արդյունքում ծնվեց գրողների «Խումբ 47»-ը:

Ըստ էության, «Խումբ 47»-ը իր կազմով երիտասարդ գրողների ու լրագրողների ազատ միություն էր, որոնց միավորողը ընկերական փոխհարաբերություններն էին և գրական-հասարակական հետաքրքրությունների ընդհանրությունը: Ըստ Ռիխտերի, խումբն ի սկզբանե եղել է միավորում՝ «քաղաքական ու գրական ընկերների, ովքեր ընդհանուր մտտեցում են ունեցել

<sup>4</sup>Рихтер Г., Девекин В. . Третьего не дано.// Рихтер. Г. Избранное. М.1987, стр. 20

իրերի դիտարկման հարցերում: Այս դիտարկման հիմնական միտումը եղել է հականացիստական ու հակաբռնապետական»:<sup>5</sup>

Չնայած իր գոյության շուրջ 20 տարիների ընթացքում «Խումբ 47»-ը գեղագիտական ու ռճաբանական միտումների առումով զգալի փոփոխություններ կրեց, այնուհանդերձ պահպանեց գլխավորը՝ նվիրվածությունը գեղարվեստական ստեղծագործական գործունեության բարձր սկզբունքներին և նպատակներին, որոնք Խմբի անդամների համար ի սկզբանե եղել ու մնացել են հասարակական ու քաղաքականը:

Խմբի քվեարկությամբ շնորհվող մրցանակներից յուրաքանչյուրը փաստում էր տվյալ գրողի գրական նշանակալի հաջողության մասին, և այն որպես կանոն, մեծ ճանաչում էր բերում նրան: Սա իր հերթին էապես նպաստում էր Արևմտյան Գերմանիայում գրականության զարգացմանը:

Ինչպես Հանս Վերներ Ռիխտերն, այնպես էլ Վոլֆգանգ Բորխերտը (1921-1947) պատերազմի ավարտը դիմավորեց ամերիկյան ռազմագերիների ճամբարում: Վերադարձից հետո նա ապրեց երկու տարուց ավելի քիչ, սակայն նրա ստեղծած փոքրաթիվ ստեղծագործությունները դարձան «Խումբ 47»-ի գաղափարական «դրոշմ», իսկ Խմբի անդամները դասեցին Բորխերտին գերմանական նոր գրականության հիմնադիրների թվին:

Բորխերտի հիմնական ստեղծագործությունը «Փողոցում, փակ դռան առջև» պիեսն է, որը գրվել է 1947 թվականի ծննդային ութ օրերի ընթացքում: Լույս տեսնելուն պես այն, որպես ռադիոպիես, հնչեցվում է գերմանական ռադիոյով: Գերմանացի քննադատներից մեկը գրում է. «Ողջ ժողովրդի կյանքը սկսվեց ճիչից, որը լսվեց 1947 թվականի փետրվարի 17-ին բարձրախոսներից»:<sup>6</sup>

Գրելով «Փողոցում, փակ դռան առջև» պիեսը, Վ.Բորխերտն իր պարտքն էր կատարում միլիոնավոր հասակակիցների հանդեպ, ովքեր ընկան ռազմի դաշտում, միլիոնավոր անդամալուծների, միայնակ ու անտուն թափառականների, պատերազմից վերադարձած զինվորների հանդեպ, ովքեր վերադառնալով տուն այն գտան ավերված, մնացին մոլորված ու վշտաբեկ տեղեկանալով իրենց հարազատների մահվան մասին: Բորխերտը գրում էր իր սերնդի անունից, որը պատերազմի արդյունքում դարձել է հոգեպես ու ֆիզիկապես հաշմանդամ և կատարվածի մեջ մեղադրում էր նացիոնալ-սոցիալիստներին ու բարձրաստիճան զինվորական հանցագործներին:

Տաղանդավոր արձակագիր և հրատարակախոս Ալֆրեդ Անդերշը Ռիխտերի հետ միասին «Խումբ 47»-ի գլխավոր գաղափարախոսներից մեկն է: Նրա գրեթե բոլոր հերոսների գործողությունները («Ազատության բալենիները», «Ձանգիբար, կամ վերջին պատճառը») պայմանավորված են ցանկացած գաղափարախոսության հանդեպ անվստահությամբ: Գրողը խոսում է իշխանական հզոր մեքենայի քաղաքական ու գաղափարախոսական

<sup>5</sup>Almanach der Gruppe 47. 1947-1962, Hrsg. von Hans Werner Richter. Reinbek bei Hamburg, 1962, S.13

<sup>6</sup>Schwitzke H., Das Hörspiel. Dramaturgie und Geschichte, Köln-Berlin, 1963, S. 257-258

համակարգերի դեմ անհատի «անպաշտպանվածություն» մասին, որոնք կարծես անդունդի պես քաշում ու ձգտում են կոլ տալ նրան: Որպես կանոն Անդերշի պատմվածքներում տեղի են ունենում «անհավանական իրադարձություններ», որոնք առավել հաճախ կապված են փախուստի կամ անհետացման թեմայի հետ: Նշենք, որ ինչպես Անդերշի վեպերում, այնպես էլ պատմվածքներում հերոսները փախչում են ոչ թե կյանքից ու իրականությունից, այլ դեպի կյանք, դեպի մարդիկ: Փախչելով՝ Անդերշի հերոսները ձգտում են փոխել իրենց ճակատագիրը, գտնել կյանքի մի նոր տարբերակ:

Մեծ կարևորություն է ներկայացնում Հանս Վերներ Ռիխտերի դերը «Խումբ 47»-ի ստեղծման և ղեկավարման գործում: Խումբ, որը 20 տարիների ընթացքում որոշում էր գրական զարգացումները ՔՖՀ-ում: Որպես փայլուն կազմակերպիչ, ով զգում էր գրական ուղղությունների բոլոր շարժերը, Ռիխտերը խթանեց տաղանդավոր երիտասարդ գրողների մուտքը գրական ասպարեզ. գրողների, որոնք հետագայում ստեղծեցին գերմանական գրականության փառքը:

## ԳԼՈՒԽ II

### «ԽՈՒՄԲ 47»-Ի ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԽՄԲԻ ԱՆԴԱՍ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«Խումբ 47»-ի և անձամբ Հ. Վ. Ռիխտերի պատմական առաքելությունն արտահայտվեց նրանում, որ խմբի գործունեության շնորհիվ հիմք դրվեց գերմանական նոր շրջանի գրականությանը: Գրականություն, որը սկսվեց «գրո ժամից», փլատակների վրա, մաքուր էջից:

Սակայն սրա հետ մեկտեղ խումբը կատարեց ևս մեկ կարևոր առաքելություն՝ ճանապարհ հարթեց երիտասարդ տաղանդավոր ու առաջադեմ գրողների համար, և պատնեշ դրեց ազգայնամուլների ու «հարմարվողականների» առջև: Բավական է նշել, որ այդ խմբին ակտիվ անդամակցում էին Հայնրիխ Բյուլը և Գյունտեր Գրասը, ովքեր դարձան 20-րդ դարի երկրորդ կեսի խոշորագույն գերմանացի գրողները:

Գեղարվեստական, գեղագիտական և ոճական հարցերում Խումբը չէր դրսևորում այնպիսի միասնություն, ինչպես քաղաքական-հասարակական խնդիրներում: Այսուհանդերձ մի անփոփոխ ընդհանրություն, որը միավորում էր Խմբի բոլոր անդամներին այն էր, որ նրանք ստեղծում էին հականացիստական, մարդասիրական գրականություն: Ինչպես նշում է «Խումբ 47»-ի անվանի արձակագիրներից մեկը՝ Հ.Բյուլը, բազմակարծությունը խմբում գործում էր շատ ավելի վաղ, քան այն «մոդայիկ» դարձավ Արևմտյան Գերմանիայում:

Այսուհանդերձ, ըստ Բյուլի, Խմբում կար ընդհանուր ոճական միտում, և դա «քննադատական ռեալիզմն է», այլ ոչ մոգականը...<sup>7</sup>

«Խումբ 47»-ի անդամ առաջադեմ գրողներն, ինչպիսիք էին Բորխերտը, Բյուլն, Այխն, Այխնգերն, Անդերշը, Ցելանը, Շնուրեն, Շայուկը, Շնաբելն ու այլոք ձգտում էին իրենց ստեղծագործություններում պատկերել մարդկային տառապանքների և հույսերի խորտակման աշխարհը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված գրողներից յուրաքանչյուրն իր մեծ ներդրումն է ունեցել Խմբի գրական-ստեղծագործական սկզբունքների ձևավորման, դրա գեղագիտական հիմնադրույթների մշակման, գաղափարական և թեմատիկ առաջնությունների առաջադրման գործում: Այսպես, Վոլֆգանգ Բորխերտը, Հայնրիխ Բյուլն, Ալֆրեդ Անդերշը, Պաուլ Շայուկը նորովի հղկեցին պատմվածքի և կարճ պատմվածքի ժանրը, միահյուսելով դրա մեջ մի կողմից գոյապաշտական (էկզիստենցիալիստական) տարրեր, իսկ մյուս կողմից ամերիկյան կարճ պատմվածքին բնորոշ հաղորդագրական ոճը և ուղղվածությունը: Պատմվածքների լեզուն շատ լակոնիկ էր «ժլատության» աստիճանի սեղմ, առաջին հայացքից թուցիկ և մակերեսային: Սակայն նշված գրողների նման շարադրանքի նպատակն ու էությունն այն էր, որ իմաստային կարևորագույն շերտը տեղափոխվի ենթատեքստ: Սա է պատճառը, որ, օրինակ, Հ.Բյուլի և Ա.Անդերշի պատմվածքները հաճախ ընդունում էին առակի (պրիտչայի) տեսք՝ շատ բաներով հիշեցնելով Աստվածաշնչյան առակները:

Գերմանական գրականության մեջ Հայնրիխ Բյուլը (1917-1985) առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Իր լավագույն ստեղծագործություններում գրողը արտահայտել է գերմանացիների մի քանի սերունդների աշխարհընկալումներն ու ճակատագրերը:

Քրիստոնեության թեման Բյուլի ստեղծագործություններում սերտորեն կապված է պատասխանատվության խնդրի հետ: Բայց ազգի համար բախտորոշ շրջանում այդ դժվարագույն խնդիրը բաժին ընկավ գրողներին: Բյուլը գրում է. «ժամանակակից գրականության վրա դրված է պատասխանատվություն, որը նա ուղղակի անգոր է կրել:

Անդեմ քաղաքականություն, անդեմ հասարակություն, անօգնական եկեղեցի...: Գրողներից և միայն նրանցից են պահանջում վճռորոշ խոսքը... Գիտությունից չեն պահանջում, քաղաքական գործիչներից ևս, եկեղեցուն էլ չեն անհանգստացնում, բայց ահա գրողները պարտավոր են արտահայտվել այն մասին, ինչի մասին ուրիշները գերադասում են լռել»:<sup>8</sup>

Հ.Բյուլն առաջիններից մեկն էր, որ պատերազմից հետո լծվեց այս դժվարին գործին: Նրա առաջին ստեղծագործություններն ամբողջապես նվիրված են մարդատյաց նացիոնալ-սոցիալիզմի մերկացմանն ու պատերազմի արհավիրքների նկարագրմանը: Ամերիկյան գերությունից

<sup>7</sup> Böll H., Angst vor der Gruppe 47 - In- "Die Gruppe 47", Bericht, Kritik, Polemik, Ein Handbuch, Neuwied-Berlin, 1967, S. 390-391

<sup>8</sup> Böll. H., Erzählungen, Hörspiele, Aufsätze. Kiepenheuer & Witsch Verlag, Köln-Berlin, 1961.S. 340

վերադարձած Բյուլը մեկը մյուսի հետևից գրում ու հրապարակում է իր առաջին ստեղծագործությունները՝ պատմվածքներն ու վեպերը, որոնք լայն արձագանք են գտնում գերմանացիների կողմից:

Հ.Բյուլի առաջին «Գնացքը եկավ ժամանակին» (1949) վեպն, ինչպես նրա վաղ շրջանի պատմվածքներն, ամբողջապես նվիրված է պատերազմի խնդիրներին:

Ի տարբերություն Ռիխտերի «Զախջախվածները» և «Մի սպանաներ» վեպերի, Բյուլի վեպում ճակատամարտի տեսարաններ չկան. Բյուլին առաջին հերթին հետաքրքրում է ոչ թե բուն պատերազմն, այլ այդ պատերազմի հանդեպ հերոսի վերաբերմունքը, դրա «արձագանքը» նրա կյանքում:

«Որտե՞ղ էիր, Ադամ» վեպի սյուժետային առանցքը կազմող խնդիրը, որը կենտրոնական դիրք է զբաղեցնում վեպի գաղափարական-գեղագիտական հարթության մեջ, Աստծո հարցադրումն է ուղղված Ադամին, որը հնչում է որպես ծանր մեղադրանք: Ադամն, արդարանալով, թե եղել է մարտի դաշտում, ծգտում է ազատվել աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների համար պատասխանատվությունից:

Աստվածաշնչյան պատմությունը Բյուլը օգտագործում է որպես ակնարկ. նա Ադամի պահվածքը համարում է անընդունելի և գտնում է, որ յուրաքանչյուր անհատ պատասխանատվություն է կրում երկրում ու հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձությունների համար:

Կոնկրետ դեպքում, տեղի ունեցած ողբերգության մեջ մեղավոր է գերմանացի հասարակությունն ու նրա յուրաքանչյուր անդամը, ովքեր աջակցեցին Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստների իշխանության գալուստ:

Վեպն աչքի է ընկնում զինվորական կերպարների մեծ թվով, ինչն ընթերցողին ամբողջական պատկերացում է տալիս պատերազմի ընթացքում գերմանական բանակում տիրող բարոյահոգեբանական իրավիճակի մասին:

«Խուճ 47»-ին մի փոքր ավելի ուշ հարած Գյունտեր Գրասն իր գրչակից ընկերների պես անցել է պատերազմի բովով, ռազմագերիների ճամբարով:

Գյունտեր Գրասնի գրական կյանքում կտրուկ շրջադարձի տարի դարձավ 1959 թվականը, երբ հրապարակվեց նրա «Թիթեյա թմբուկ» վեպը, որը կարճ ժամանակահատվածում մեծ ճանաչում բերեց հեղինակին, և միաժամանակ դարձավ քննադատության առարկա:

Առաջին հայացքից թվում է, որ վեպում չկան նացիոնալ-սոցիալիստների կամ պատերազմի հանցագործների հասցեին ուղղակի մեղադրանքներ, սակայն իրականում դրանք քողարկված են Գրասնի ֆանտաստիկ, գրոտեսկային պատկերների, երգիծանքով ու սարկազմով ուղեկցվող, հաճախ անհավանական, հեքիաթային պատմությունների խորքային շերտերում: Գերմանացի քննադատներից ոմանք, խոսելով Գ. Գրասնի մասին, նրան

ներկայացնում են, որպես մի «գրող, ով վեր է կանգնած բարոյախոսությունից», գտնվում է «բարու ու չարի սահմանից դուրս»:<sup>9</sup>

Նման տեսակետն էապես սխալ է, քանի որ «ամեն ինչից վեր և ամեն ինչից գատ կանգնած լինելը», ինչպես և Հ.Բյուլի, Հանս Շնիրի դեպքում, ընդամենը խաղ է, դիմակ:

1968 թվականից հետո, երբ «Խուճ 47»-ը, կատարելով իր պատմական առաքելությունը, դադարեց իր գոյությունը, Գյունտեր Գրասը պահպանեց իր գեղագիտական-գաղափարական հայեցակարգը, միաժամանակ աչքի ընկնելով թե՛ իր գրական, և թե՛ հասարակական գործունեությանը: Նա այսօր էլ շարունակում է պայքարել ընդդեմ նեոնացիզմի ու սպառազինության մրցավազքի:

Պաուլ Շայուկն արևմտագերմանացի գրողների այն սերնդի ներկայացուցիչներից էր, որոնց ընդունված է անվանել «վերադարձածների սերունդ»:

Գրական գործունեությունը սկսելով գրական-քննադատական հոդվածներից ու ռադիոպիեսներից, Շայուկն ավելի ուշ գրում է իր լավագույն՝ «Էնգելբերթ Ռայնեկե» ("Engelbert Reineke", 1959) վեպը, որը ճանաչում բերեց հեղինակին:<sup>10</sup>

Էնգելբերթ Ռայնեկեն կանգնած է դժվար ընտրության առջև՝ ստի ու ճշմարտության. վտանգավոր ճշմարտության և անվտանգ, հարմարավետ գոյության միջև: Հերոսը կարող է չտեսնելու տալ իրականությունը և թաքնվել անբարո կեղծիքի ու ստի հետևում:

Առավոտից մինչև երեկո ընկած ժամանակահատվածը Ռայնեկեի մտորումների, ներքին ապրումների և հիշողությունների ժամանակահատվածն է, ինչի շնորհիվ պատմությունը ներկայանում է միաժամանակ երկու ժամանակային հարթություններում՝ անցյալում ու ներկայում:

Պ.Շայուկի վեպն անցյալի իր պատկերումներով, շեշտադրմամբ, գաղափարական ուղղվածությամբ շատ մոտ է Հ.Բյուլի «Բիլիարդ ինն անց կեսին» վեպին: Երկու գործերի գաղափարական հիմքն է կազմում անհատի բարոյական պատասխանատվության թեման, որն անմիջականորեն կապված է նացիզմի ու պատերազմի էության իմաստավորման հետ: Իրենց վեպերում երկու առաջադեմ գրողները համոզմունք են հայտնում այն բանում, որ անհատն իրավունք չունի թաքնվել պատասխանատվությունից:

Պ.Շայուկի վեպում դպրոցը ներկայանում է որպես այն փոքրիկ բջիջն, այն հանգուցային կետը, բարոյական և հոգևոր բախումների կենտրոնը, որում ծնավորվում է ապագա քաղաքացին: Դպրոցն է պատասխան տալիս այն հարցին, թե ինչպիսին կլինի վաղը գերմանական երիտասարդությունը նացիզմի գաղափարակիցը, թե՛ հակառակորդը:

<sup>9</sup> Schwarz W., Der Erzähler Günter Grass. Francke Verlag, Bern-München, 1969. S. 60

<sup>10</sup> Schallük P., Engelbert Reineke, Roman Frankfurt am Main, Hamburg, Fischer Bückerei, 1959, S. 9

Վուլֆրիտրիխ Շնուրեն (1920-1989) պատերազմից անմիջապես հետո հանդես է գալիս մամուլում որպես քննադատ, իսկ 1947 թվականին դառնում է «47-ի խմբի» հիմնադիրներից և ակտիվ անդամներից մեկը: Ավելի ուշ, վերհիշելով, թե ինչ պայմաններում էին ստեղծագործում ինքն ու իր գործընկերները, գրողը նշում է. «Գրելը հեշտ չէր: Չկար բարոյական հիմք: Չկային գրական նմուշներ: Չկար ավանդույթ... Նույնիսկ լեզուն էր օգտագործման համար ոչ պիտանի...»<sup>11</sup>

«Խումբ 47»-ի մեծագույն հաջողություններից մեկը կարելի է համարել այն, որ խմբի անդամների համառ ջանքերի շնորհիվ հետպատերազմյան Արևմտյան Գերմանիայում բարոյական հաղթանակ տարան հականացիստական գաղափարները: Եթե հետպատերազմյան առաջին տարիներին տարբեր կողմերից լսվում էին ռևանշիստական կոչեր, ապա ավելի ուշ, երբ «Խումբ 47»-ի երիտասարդ գրողների ծայրն ավելի հաստատուն ու լսելի դարձավ, նման կոչերն աստիճանաբար լռեցին: Այս գործընթացում իր զգալի ու ուրույն տեղն ուներ Վ.Շնուրեն. նա առաջիններից մեկն էր, որ դեռ 1950-ական թվականների սկզբին կանխատեսեց նեոնացիզմի ծնունդը և իր հրապարակախոսական գործերում ու պատմվածքներում ահազանգեց նման վտանգի մասին:

Պ. Շայուկը, Վ. Շնուրեն և Վ. Քոլբենհոֆը, դիտարկելով պատմական և հասարակական զարգացումները «վերադարձածների» սերնդի տեսանկյունից, ահազանգում են ռևանշիզմի վտանգի մասին և իրենց ստեղծագործություններում շեշտադրում «անցյալի արդիականության» խնդիրը՝ ելնելով «Խումբ 47»-ի գեղարվեստական և գաղափարական դիրքերից:

Հասարակական-քաղաքական առումով «Խումբ 47»-ի գործունեությունը քննադատական մոտեցմամբ բնորոշվում է որպես ռազմատենչ և ռևանշիստական քաղաքական միտումներ: Անգամ քաղաքական վերնախավն է խոստովանում, որ այդ խմբի գրական և հասարակական գործունեությունը մեծապես նպաստեց ԳՖՀ-ի քաղաքական կլիմայի բարելավմանը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ «Խումբ 47»-ի անդամ գրողները ընդգծում են իրենց ապաքաղաքականությունը, դա պետք է առաջին հերթին հասկանալ որպես քաղաքական որևէ կոնկրետ ուժի հարելը, բայց ոչ որպես քաղաքական դիրքորոշման բացակայություն: Խմբի անդամ գրողներն իրենց ստեղծագործությունների թեմատիկայով, գեղարվեստական միջոցների «զինանոցով» և գաղափարական սկզբունքներով միշտ արտահայտել են իրենց հասարակական-քաղաքական դիրքորոշումն ընդդեմ ֆաշիզմի, ցանկացած տիպի բռնապետության և տոտալիտարիզմի սպառազինության:

Գրականագետների մեծ մասը, կարևորելով «Խումբ 47»-ի հասարակական-քաղաքական գործունեության դերը հետպատերազմական Գերմանիայի դժվարին շրջանում, շատ մակերեսորեն են մոտենում Խմբի գրական ներդրմանը: Մինչդեռ վերլուծությունը ցույց է տալիս, որ Խմբի անդամ

գրողները հսկայական ներդրում ունեցան գերմանական գրականության զարգացման գործում:

Առաջին հերթին նրանք կարողացան նոր շունչ տալ կաթվածահար եղած գերմանալեզու գրականությանը, համախմբել «ներքին» ու «արտաքին» արտագաղթում հայտնված տաղանդավոր առաջադեմ գրողներին: Խմբի անդամ գրողները կամուրջ հանդիսացան դարասկզբի գրական ավանդույթների և ծնունդ առնող նոր գրականության միջև: Հենց այդ նոր գրականությունն է, որ հիմք է դնում ողջ արևմտագերմանական նորագույն շրջանի գրականությանը:

«Խումբ 47»-ի գրողները նոր թափ հաղորդեցին ինչպես փոքր արձակին (պատմվածք, կարճ պատմվածք, էսսե), այնպես էլ վիպագրությանը (Հ.Բյուլ, Գ.Գրաս, Զ.Լենց, Մ.Վալգեր), պոեզիային (Գ.Այխ, Կ.Կրոլով, Ն.Ջաքս), դրամատուրգիային (Փ.Վայս, Ռ.Հոխհոթ):

Կատարելով իր պատմական և պատմա - մշակութային առաքելությունը «Խումբ 47»-ի գրականությունն աստիճանաբար անցնում է ԳՖՀ-ի գրականության պատմության գիրկը:

### ԳԼՈՒԽ III

#### «ՆՆՍ ՎԵՐՆԵՐ ՌԻԽՏԵՐԸ՝ ՈՐՊԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՊԻ ՀԻՄՆԱԴԻՐ

Հ.Վ.Ռիխտերի ստեղծագործական ուղին սովորաբար բաժանում են երկու շրջանի՝ 1944-1960թթ և 1960-1993թթ: Կասկած չի առաջացնում այն փաստը, որ հեղինակի լավագույն գործերը գրվել են առաջին շրջանում: Այս շրջանի գործերը միևնույն ժամանակ կրել են փորձարարական բնույթ. «Զախցախվածները» (1949), «Նրանք ընկան Աստծո ձեռքից» (1951), «Հետքեր ավազի վրա» (1953), «Մի սպանաներ» (1955), «Լինուս Ֆլեկ» (1959) վեպերը՝ առաջին փորձն էր գերմանական գրականության մեջ՝ միաձուլելու գեղարվեստական նյութը ռեպորտաժի (լրահաղորդման) և հրապարակա-խոսական ժանրի հետ: Այս նոր ոճի քաղաքական վեպը, որի հիմնադիրը, փաստորեն, դարձավ Ռիխտերը, իր սկիզբն առավ «Դեռ Ռուֆ» (Կոչ) ամսագրում:

Նյութի և թեմայի հրատապությունը, նրա արդիականությունը թելադրեցին հեղինակին «գեղարվեստականացված» լրահաղորդման յուրահատուկ ժանրը՝ «Խումբ 47»-ի անդամ մյուս գրողներին բնորոշ նույն լեզվա-ոճական առանձնահատկություններով. պյուժեի «չոր» շարադրանքով, որտեղ բառապաշարը շատ սուղ էր, ժլատ, սեղմ, փոխարենն այդ գործերն առատ են աշխույժ երկխոսություններով, սուր հարցադրումներով:

Փաստերի այդ չոր շարադրանքը, որը երբեմն փաստագրական հաշվետվություն է հիշեցնում, զուգակցված լայնածավալ երկխոսությունների հետ, առանց հեղինակային մեկնաբանության. այս ամենը որոշ չափով հիշեցնում է Հեմինգուեյի ոճը:

<sup>11</sup>Schnurre W., Man sollte dagegen sein, Frankfurt am Main, Hamburg, 1964, S. 9

Հ.Վ. Ռիխտերի գրած առաջին վեպը՝ «Ջախջախվածները», բացի վերը նշված հատկանիշներից աչքի է ընկնում նաև լեզվական այլ առանձնահատկություններով: այստեղ առկա է գինվորական ժարգոնը, խոսակցական հնչերանգ, պարզեցված խոսք, որոնք առավել հավաստիություն են հաղորդում վեպին:

«Ջախջախվածներն» առաջին վեպն էր գերմանացի զինվորների պատերազմում մասնակցության պատկերման, ուր փորձ է արվում իմաստավորել ոչ վաղ անցյալի ողբերգական իրադարձությունները, դասեր քաղել անցյալի սխալներից:

Սյուժետային առումով «Ջախջախվածները» վեպը հստակորեն բաժանվում է երկու մասի՝ իրադարձություններ ռազմաճակատում և իրադարձություններ ռազմագերիների ճամբարում: Իտալիայի Մոնտե-Կասինո քաղաքում ընթացող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճակատամարտն ավարտվեց գերմանական զորքերի ջախջախիչ պարտությամբ: Սա ոչ միայն և ոչ այնքան գերմանական զենքի պարտությունն է, որքան արդյունք նացիստական բանակում տիրող հուսահատության ու բարոյալքության: Ռիխտերը համոզիչ ձևով ցույց է տալիս նացիստական զինվորական հրամանատարության հանցավոր էությունը, երբ գետնալները զինվորներին մղում են անխուսափելի ու անիմաստ մահվան:

Պահպանելով ժամանակագրական հաջորդականությունը՝ Ռիխտերն ականատեսի աչքով ներկայացնում է գերմանական բանակի աստիճանական անկումը, որն ավարտվում է նրանով, որ հերոսն ու նրա զինակից ընկերներն ինքնակամ գերի են հանձնվում ամերիկյան բանակին: Հերոսի խոսքը ոչ այնքան պատերազմի մասին է, որքան նացիոնալ-սոցիալիզմի, որը ծնել է այդ պատերազմը:

Մենք զուգահեռ համեմատական ենք անցկացրել Հանս Վերներ Ռիխտերի «Ջախջախվածները» և Էրիխ Մարիա Ռեմարկի «Արևմտյան ռազմաճակատում փոփոխություններ չկան» („Im Westen nichts Neues“, 1928) վեպերի միջև: Ե՛վ Ռեմարկը և՛ Ռիխտերը արժանահավատորեն ներկայացնում են արյունահեղ ու անիմաստ պատերազմի քաոսը: Երկուսն էլ առանց չափազանցությունների նկարագրում են իրենց կերպարների հոգևոր խռովքը, նրանց վախն ու վիշտն, ուրախության բուսկներն ու մոռացության կարճատև ակնթարթները:

Թեև երկու գրողները պատմում են երկու տարբեր պատերազմների մասին, խոշոր հաշվով, երկու դեպքում էլ բուն էությունը մնում է անփոփոխ: վեպերում պատերազմը ընթերցողի առջև ներկայանում է որպես դաժան իրականության յուրօրինակ դրսևորում, նրա անբաժան տարր:

Ռեմարկն ու Ռիխտերը մոտ են նաև իրենց գեղարվեստական-գեղագիտական հայեցակարգերով: Նրանք կարևորում են իրենց հերոսների բարոյական հատկանիշները, սակայն միաժամանակ երկուսն էլ ստվերում են թողնում պատերազմի պատճառները: Այդ իսկ պատճառով էլ նրանց ստեղծագործություններում վեր չի հանվում մեղքի ու պատասխանատվության խնդիրը:

1955 թվականին Հանս Վերներ Ռիխտերը գրեց իր լավագույն՝ «Մի սպանաներ» վեպը: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո ողջ աշխարհը գերմանացիներին անվանում էր «նացիստներ» և «մարդասպաններ»: Վեպի վերլուծությունն ի հայտ է բերում հեղինակի ձգտումը, եթե ոչ արդարացնելու, ապա առնվազն ցույց տալու, որ նացիոնալ-սոցիալիզմի օրոք ապրող գերմանացիներն ամենևին էլ միատարր զանգված չէին, որ նրանցից շատ շատերն ատում էին նացիզմը և նրա գաղափարախոսներին, փորձում էին ներսից ընդդիմանալ նրանց, սակայն անգոր էին դիմակայել բռնապետության դաժան մեքենային: Նացիզմից տուժեցին ոչ միայն այլ ազգերն, այլև հենց գերմանացիներն՝ ավելի շատ, քան մյուսները:

Աստիճանական քննության շնորհիվ փորձել ենք բացահայտել այն ներքին լարվածությունը, որը հաստատուն դիմամիկայով աճում է վեպի ամբողջ զարգացման ընթացքում: Ստեղծագործությունն աչքի է ընկնում հարուստ լեզվի և ինքնատիպ կառուցվածքի շնորհիվ:

Վեպն ունի չորս հավասարազոր գլխավոր հերոսներ՝ Վալտեր, Պետեր, Գերհարդ Լորենց եղբայրները և Յուրգեն Շիմանը: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր ճակատագիրն, իր կյանքի պատմությունը, որը վեպում բոլոր չորս հերոսների համար սկսվում է 1939 թվականից՝ պատերազմի առաջին օրից: Պատմելով հերոսներից մեկի մասին՝ Ռիխտերն այն ընդհատում է, թողնում անավարտ, պատմելով երկրորդ, երրորդ և չորրորդ հերոսների մասին, կրկին պատմությունը թողնելով անավարտ: Դրան հետևում է նույն հաջորդականությամբ, նույն չորս կերպարների մասին պատմությունների երկրորդ փուլը և այդպես շարունակ, մինչև տվյալ հերոսի մահը:

Հենց այս կառուցվածքի շնորհիվ էլ Ռիխտերին հաջողվում է մշտական լարվածության մեջ պահել ընթերցողին և «ստիպել», որ նա վեպն ընթերցի այսպես ասած, մեկ շնչով:

Չնայած վեպի գաղափարական ու սյուժետային ծանրաբեռնվածությանը, այն «ոյուրամարս է», այն պարզ պատճառով, որ Ռիխտերն այստեղ իրաժարվել է հեղինակային երկարաշունչ մեկնաբանություններից. նա ներկայացնում է գործողություններ ու երկխոսություններ, որոնց շնորհիվ կերպարներն իրենք են իրենց բացահայտում՝ թույլ տալով ընթերցողի մոտ ձևավորվի նրանցից յուրաքանչյուրի մասին որոշակի կայուն կարծիք:

Ռիխտերի հերոսները միմյանցից տարբերվում են իրենց մտավոր և ֆիզիկական ունակություններով, բարոյական հատկանիշներով, աշխարհընկալումներով: Նրանց կերպարները կերտելիս Ռիխտերը ձգտել է հնարավորինս մոտ լինել իրականությանը՝ ներկայացնելով հերոսների դրական ու բացասական գծերը:

Վեպում գերիշխում է «գորանոցային» խոսելաոճը, քանի որ հիմնական իրադարձությունները ծավալվում են զորամասերում ու մարտադաշտերում: Վեպի սկզբում ներկայացնելով իր հերոսներին, Հ. Վ. Ռիխտերը, ավելի ուշ, ցույց է տալիս, որ նրանց անհատական հատկանիշներն էական դեր են խաղում իրենց հետագա ճակատագրում:

իրենց ծավալով բոլոր չորս հերոսների մասին պատմող դրվագներն ընդհանուր առմամբ հավասար են: Ռիխտերն իր հերթին ձեռնպահ մնալով մեկնաբանություններից՝ նրանց մասին պատմում է որպես նրանց վշտերին ու ցավերին անհաղորդ, կողմնակի դիմորդ, չբացատրելով տեղի ունեցածի վերաբերյալ սեփական տեսակետը:

Իր գեղարվեստական-գեղագիտական սկզբունքներին հավատարիմ մնալով՝ Հ.Վ. Ռիխտերը «Մի սպանաներ» վեպում, ինչպես որ «Զախչախվածներ»-ում, պարբերաբար միմյանց է հակադրում բնությունն ու պատերազմող մարդկանց, այս դրվագներում ցուցադրելով իր գրական մեծ վարպետությունը:

«Մի սպանաներ» վեպում Ռիխտերը պարզորոշ հնչեցնում է նաև գրականության մեջ ավանդական «հայրեր-որդիներ» հակամարտության թեման: Գրողը հուշում է, որ մանկահասակ ու պատանի գերմանացիների մահվան մեջ մեղավոր են նաև ավագ սերնդի ներկայացուցիչներն՝ իրենց ազգայնամոլությամբ և անհեռատեսությամբ: Կուրորեն հավատալով գերմանացի զինվորի ոգու, գերմանական զենքի անպարտելի ուժի մասին ֆանատիկոս նացիոնալ-սոցիալիստների բարբառանքներին՝ նրանք կուրորեն իրենց որդիներին ուղարկեցին կառավարան՝ դեպի անխուսափելի մահը:

Այդ նույն գաղափարի շարունակությունն ու զարգացումն ենք գտնում Հ.Վ. Ռիխտերի հաջորդ, «Լինուս Ֆլեկ, կամ կորսված արժանապատվությունը» (1959) վեպում:

Նաև ժամանակագրական առումով «Լինուս Ֆլեկ» վեպը «Մի սպանաներ»-ի շարունակությունն է. այն սկսվում է պատերազմի վերջին, երբ ավարտվում են նախորդ վեպի գործողությունները:

Ստեղծագործությունն իր մեջ կրում է «խաբեբայական» ու «խրատական» վեպերի տարրեր: Այն գրված է առավելապես երգիծական ոգով: Սա Ռիխտերի առաջին վեպն է, որը նվիրված է ներկային՝ Արևմտյան Գերմանիայի հետպատերազմյան տարիների կյանքին:

Վեպի գործողությունները, որի գլխավոր հերոսը խարդախ ու խաբեբա Լինուս Ֆլեկն է, տեղի են ունենում գերմանական «տնտեսական հրաշքի» ֆոնի վրա:

Ռիխտերի երեսպաշտ հերոսն աչքի է ընկնում ոչ միայն խորամանկությամբ, այլև համառությամբ, ինչի շնորհիվ ի վերջո նրան հաջողվում է ծառայության անցնել ամերիկյան բանակում: Ավելի ուշ Լինուսին առաջարկվում է դառնալ երիտասարդական ամսագրի խմբագիր: Այսպիսով Հ.Վ. Ռիխտերը հնարավորություն է ստանում Լինուսի կերպարի միջոցով անդրադառնալ հետպատերազմյան Արևմտյան Գերմանիայի մամուլի խնդիրներին, որոնց հետ նա առնչվել էր անցյալում «Ղեր Ռուֆը» հրապարակելիս: Սա հեղինակին թույլ է տալիս նաև բացահայտել ու քննադատել Գերմանիայում ամերիկյան իշխանությունների վարած երեսպաշտ քաղաքականությունը, կապված «ազատ» մամուլի հետ:

Իր ոճաբանական-լեզվաբանական առանձնահատկություններով «Լինուս Ֆլեկ» վեպն էապես տարբերվում է «Մի սպանաներ» վեպից: Եթե Ռիխտերի նախորդ ստեղծագործությանը բնորոշ էր «գորանոցային» պարզ ու

կոշտ ոճն առանց մեկնաբանությունների ու գունագարդումների, ինչը պայմանավորված էր վեպի թեմայով, ապա այստեղ մենք ակնհայտորեն տեսնում ենք նոր Ռիխտերի, որն էապես կրճատելով երկխոսություններն, առավել մեծ տեղ է հատկացնում հերոսների կերպարների ու հետպատերազմյան արևմտագերմանական իրականության նկարագրություններին:

«Լինուս Ֆլեկ»-ը նախորդ վեպից տարբերվում է նաև իր ռիթմով, որի պատճառը կտրուկ ու անսպասելի փոփոխություններն են՝ ինչպես հերոսների կյանքում, այնպես էլ գերմանական կենցաղում ու տնտեսության մեջ:

«Լինուս Ֆլեկ» վեպի սյուժետային ու գաղափարական հարթության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում Վաշթթելի կերպարը, որը հիշեցնում է վեպի հեղինակին: Այս սկզբունքային երիտասարդը սուր քննադատության է ենթարկում ամերիկյան օկուպացիոն զորքերի հրամանատարությանը՝ մերժելով Գերմանիայում նրա վարած արատավոր քաղաքականությունը:

Վեպի քննությունը ցույց է տալիս, որ Վաշթթելի կերպարը «Լինուս Ֆլեկ»-ում կղզիացված բնույթ ունի. այս հերոսի կերպարն էապես տարբերվում է Լինուս Ֆլեկին շրջապատող մյուս կերպարներից: Լինուսը փորձում է կարգի հրավիրել գործընկերոջը, մատնացույց է անում նրա թույլ տված սխալներն, ինչը ոչ միայն չի զսպում, այլև ավելի է զայրացնում Վաշթթելին:

Հերթական անգամ ցուցադրելով իր սկզբունքայնությունը՝ լրագրողը հայտարարում է այն մասին, որ կամ ինքը կգրի այն ինչը ձիշտ է համարում, կամ կհեռանա ամսագրից:

Ռիխտերն անդրադառնում է նաև գերմանացիներին և անձամբ իրեն հուզող այնպիսի սուր ու հիվանդագին խնդրին, ինչպիսին Գերմանիայի մասնատումն է: Գրողին մտահոգում է ոչ միայն այն, որ աշխարհի հզորները սեպ են խրել միևնույն ազգի երկու հատվածների միջև, այլև այն, որ ԳՂՀ անվանումը կրող պետությունը վեր է ածվել բռնապետության: Այս փաստերի մասին է խոսքը «Լինուս Ֆլեկ»-ի այն դրվագում, որտեղ Ռիխտերը ներկայացնում է «Արևմուտք-Արևելք»՝ Արևմտյան և Արևելյան Գերմանիայի գրողների ու լրագրողների հանդիպումը:

«Լինուս Ֆլեկ»-ի վերջին դրվագներից մեկում Ռիխտերն իր ստեղծագործությունն օգտագործելով որպես սեփական տեսակետների հնչեցման քաղաքական ամբիոն, ցավով նշում է, որ հետպատերազմյան Արևմտյան Գերմանիան առողջ ու հասուն քաղաքական գործիչների խիստ պահանջ է զգում: Ավագ սերնդի քաղաքական գործիչները, որոնց մասին վերացրել են նացիոնալ-սոցիալիստներն, իսկ այն եզակիները, որոնց հաջողվել է փախչել ու փրկվել նացիզմի ճիրաններից ու պատերազմից հետո վերադառնալ հայրենիք, անկարող են ակտիվ գործունեություն ծավալել նոր Գերմանիայի քաղաքական դաշտում, քանի որ նրանց տեսակետներն ու աշխարհընկալումները հնացել են և չեն արտացոլում արդի իրականությունը:

«Լինուս Ֆլեկ»-ը, անկասկած, Ռիխտերի լավագույն վեպերից է, ինչպես կառուցվածքային, գեղարվեստական - գաղափարական, այնպես էլ կերպարների հաջողվածության առումով:

Գրողը կարողացել է օբյեկտիվորեն պատկերել հետպատերազմյան Չերմանիայի տասը տարիների բարդ ու հակասություններով լի իրականությունը: Հակասական է նաև պատերազմից հետո ձևավորվող գերմանական նոր հասարակությունը, որի մի կողմում փառաձուլ ու ստախոս Լինուս Ֆլեկն է և նրան շրջապատող քաղքենիները, մյուսում՝ գերմանացի ազնիվ, հայրենասեր ու երիտասարդ մտավորականները, որոնց այստեղ մարմնավորում է Վաշթթեը: Ռիխտերը ցույց է տալիս, որ հենց նրանց պայքարով Արևմտյան Չերմանիայում հարթվեց ճանապարհը դեպի ժողովրդավարություն՝ դեպի բազմակարծություն ու այլախոհություն: Հենց սրանք էին, ըստ Ռիխտերի այն հիմնաքարերը, որոնց վրա կառուցվեց, փլատակներից վեր խոյացավ նոր Չերմանիան:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Խումբ 47»-ի գեղագիտական և գաղափարական սկզբունքները ծնունդ են առնում «Դեռ Ռուֆ» (Կոչ) ամսագրում, որը լույս էր տեսնում գերմանացի ռազմագերիների կողմից ԱՄՆ-ում: Հետագայում այդ ամսագրի հրապարակումը շարունակվեց Արևմտյան Չերմանիայում: «Խումբ 47»-ը հանդիսանում է ՉՖՀ-ի գրական, մշակութային և քաղաքական գարգացման անբաժանելի մասը: Այդ են վկայում ինչպես Խմբի անդամներ գրողների ստեղծագործություններն, այնպես էլ արևմտագերմանական պատմաբանները, մշակութաբանները և հասարակական-քաղաքական ամենաազդեցիկ կազմակերպությունները: «Խումբ 47»-ի ստեղծողները, որոնցից գլխավորը Հ.Վ.Ռիխտերն էր, իրենց առջև դրեցին մի քանի խոշոր խնդիրներ. դաստիարակել խմբի շրջանակներում մի հոգևոր «վերնախավ», որը կարող է էապես ազդել գերմանական ժողովրդի մտքի և հոգու վրա, և որը պետք է նպաստի արևմտագերմանական գրականության լավագույն դեմքերի խմբավորմանը. խմբի նպատակներից էր նաև երիտասարդ տաղանդավոր գրողների ներգրավումն այդ միավորման մեջ, և նոր սերնդի միջոցով գրական գեղարվեստական նոր սկզբունքների հաստատումը:
2. Առանձնահատուկ կարևորություն ունի Հանս Վերներ Ռիխտերի դերը «Խումբ 47»-ի ստեղծման և ղեկավարման գործում: Խումբ, որը 20 տարիների ընթացքում որոշում էր գրական իրավիճակը և գրական գարգացումները ՉՖՀ-ում: Որպես փայլուն կազմակերպիչ, ով գգու էր գրական ուղղությունների բոլոր շարժերը, Ռիխտերը մեծապես նպաստեց մեծ քանակով տաղանդավոր երիտասարդ գրողների մուտքը գրական ասպարեզ: Այդ գրողները հետագայում ստեղծեցին գերմանական գրականության փառքը:

- Մեծ է Ռիխտերի դերը նաև հրապարակախոսության, դեմոկրատական գարգացման, և երկրի դեմոկրատական ուժերի միավորման գործում: Մի կողմից Ռիխտերն՝ Անդերշի հետ մեկտեղ հորդորում էին երիտասարդ գրողներին գրական նոր ուղիներ և գեղարվեստական նոր միջոցներով ոնելու, մյուս կողմից հանդես էին գալիս սեփական հայեցակարգով և գրական - հասարակական դրույթներով «Լիտերատուր», «Կուլտուր», «Ռուֆ» ամսագրերում, ելույթ էին ունենում գրականության և քաղաքականության հրատապ խնդիրների վերաբերյալ ռադիոյով և հեռուստատեսությամբ:
3. Վոլֆգանգ Բորխերտի փոքր արձակի ուսումնասիրությունը կարևոր է երկու առումներով. առաջինն այն է, որ իր վերջին գործով՝ «Փողոցում փակ դռան առջև», նա որպես էստաֆետ փոխանցեց «Խումբ 47»-ին պատերազմական և ետպատերազմյան շրջանի ստեղծագործության գաղափարական մի մոդել, որը հետագայում գարգացրին Ռիխտերն, Անդերշը, Բյուլը: Երկրորդն՝ անցումային պատմական դարաշրջաններում գեղարվեստական տեքստի կառուցման օրինաչափություններն են, որոնք սերտորեն կապված են գոյաբանական և մշակութաբանական խնդիրների հետ: Բորխերտի ստեղծագործությունների մեծ մասը՝ դրվագներ են սեփական կյանքից: «Մարդը և պատերազմը» թեման մշտապես կապված է երկու հիմնական խնդիրների հետ. առաջինը պատերազմը փորձություն է մարդու ֆիզիկական և բարոյական կայունության առումով. նրա հերոսների մի մասը հոգեպես «կոտրվում են» պատերազմից, հերոսների մյուս խումբը կարողանում է դիմակայել պատերազմի փորձություններին ի շնորհիվ սիրո և կարեկցանքի: Բորխերտի ուշադրության կենտրոնում ոչ թե ինքը պատերազմն է, այլ դրա ազդեցությունը մարդու վրա:
  4. Տաղանդավոր արձակագիր և հրապարակախոս Ալֆրեդ Անդերշը, լինելով Ռիխտերի հետ միասին «Խումբ 47»-ի գլխավոր գաղափարախոսներից մեկն, իր ստեղծագործություններում առաջնային է դարձնում գաղափարականը և գաղափարախոսությունը: Անդերշի հերոսների գրեթե բոլոր գործողությունները պայմանավորված են ցանկացած գաղափարախոսության հանդեպ անվստահությամբ: Գրողը խոսում է իշխանական հզոր մեքենայի քաղաքական ու գաղափարախոսական համակարգերի դեմ անհատի «անպաշտպանվածության» մասին: Որպես կանոն Անդերշի պատմվածքներում տեղի են ունենում «անհավանական իրադարձություններ», որոնք առավել հաճախ կապված են փախուստի կամ անհետացման թեմայի հետ: Նշենք, որ ինչպես Անդերշի վեպերում, այնպես էլ պատմվածքներում հերոսները փախչում են ոչ թե կյանքից ու իրականությունից, այլ դեպի կյանք, դեպի մարդիկ: Փախչելով՝ Անդերշի հերոսներ ընդգտում են փոխել իրենց ճակատագիրը, գտնել կյանքի մի նոր տարբերակ:

Ըստ Անդերշի արվեստն անպատճառ պետք է պատկերի մարդկային ապրումները, հույզերը, տառապանքներն, այն ամենն, ինչը գրողը անվանում է «հոգևոր գործընթացներ»: Արվեստն ու գրականությունը, ըստ Անդերշի ձևակերպման, պետք է աշխատեն «դարաշրջանի հարցերի» վրա:

5. Հասարակական - քաղաքական առումով «Խումբ 47»-ի գործունեությունը բնորոշվում է քննադատական մոտեցմամբ ռազմատենչ և ռևանշիստական քաղաքական միտումների հանդեպ: Անգամ քաղաքական վերնախավն է խոստովանում, որ այդ խմբի գրական և հասարակական գործունեությունը մեծապես նպաստեց ՉՖՀ-ի քաղաքական կլիմայի բարելավմանը:

Թեև «Խումբ 47»-ի անդամ գրողները ընդգծում են իրենց ապաքաղաքականությունը, դա պետք է առաջին հերթին հասկանալ որպես քաղաքական որևէ կոնկրետ ուժի հարելը, բայց ոչ որպես քաղաքական դիրքորոշման բացակայություն: Խմբի անդամ գրողներն իրենց ստեղծագործությունների թեմատիկայով, գեղարվեստական միջոցների «գինանոցով» և գաղափարական սկզբունքներով միշտ արտահայտել են իրենց հասարակական - քաղաքական դիրքորոշումն ընդդեմ ֆաշիզմի, ցանկացած տիպի բռնապետության և տոտալիտարիզմի սպառազինության:

Լինելով ազատական և ժողովրդավար սկզբունքների ջատագովներ, «Խումբ 47»-ն արտահայտում էր առաջադեմ խավի հայացքները: Սա թերևս՝ անգամ եվրոպական մասշտաբներով, բուրժուական դեմոկրատների միակ ինտելեկտուալ խմբավորումն էր:

Կատարելով իր պատմական և պատմա - մշակութային առաքելությունը՝ «Խումբ 47»-ի գրականությունն աստիճանաբար անցնում է ՉՖՀ-ի գրականության պատմության գիրկը:

6. Հայնրիխ Բյոլի ստեղծագործություններում վերաբերմունքը գերմանական կաթոլիկության նկատմամբ առանձնահատուկ խնդիր է՝ առաջին հերթին բարոյական կատեգորիա: Իրական հավատը Բյոլը հասկանում է որպես մարդասիրություն: Մարդուն բռնությունից պաշտպանելու ձգտումը նրա աչքերում քրիստոնեական բարձրագույն առաքինությունն է. «Հավատ առանց հետևանքների», «եսամոլական քրիստոնեությունը», ըստ Բյոլի արսուրդ է, հակասություն:

Քրիստոնեության թեման Բյոլի ստեղծագործություններում սերտորեն կապված է պատասխանատվության խնդրի հետ: Ըստ նրա նացիոնալ-սոցիալիստների ու բարձրաստիճան գինվորականների ռճրագործությունները, դաժանությունն էապես հակասում են քրիստոնեական բարոյախոսությանը:

«Խումբ 47»-ի ստեղծումից հետո Հ.Բյոլը դարձավ նրա ակտիվ անդամներից ու գաղափարախոսներից մեկը:

7. Գյունտեր Գրասի առաջին ընթերցումը «Խումբ 47»-ի հերթական նիստում՝ հատված էր նրա գլուխգործոց «Թիթեյա թմբուկը» վեպից, որի համար նա հետագայում արժանացավ Նոբելյան մրցանակի: Դրա

քննարկումը բերեց հեղինակին այն համոզմունքին, որ ինքը ճիշտ ուղի է ընտրել, կառուցելով իր վեպը գրոտեսկի, սարկազմի և «դիմակի» խոստովանական սկզբունքների վրա: Գրոտեսկային եղանակով են պատկերված ոչ միայն վեպի հերոս Օսկարն՝ իր անծով, իր մտածելակերպով և գործելաձևով, այլև ողջ պատերազմական և ետպատերազմական գերմանական պատմությունը: Այն ստիպում է նորովի տեսնել և գնահատել այդ ժամանակաշրջանի բոլոր իրողությունները:

Պ. Շայուկը, Վ. Շնուրեն և Վ. Քոլբենհոֆը, դիտարկելով պատմական և հասարակական զարգացումները «վերադարձածների» սերնդի տեսանկյունից, ահազանգում են ռևանշիզմի վտանգի մասին և իրենց ստեղծագործություններում շեշտադրում «անցյալի արդիականության» խնդիրը՝ ելնելով «Խումբ 47»-ի գեղարվեստական և գաղափարական դիրքերից:

8. Հանս Վերներ Ռիխտերն արևմտագերմանական գրականության ետպատերազմյան շրջանի առանցքային դեմքերից մեկն է: Նրա ստեղծագործությունը, որն ամբողջովին ներծծված է հակա-ֆաշիստական և հակամիլիտարիստական գաղափարներով, էապես նպաստեց ՉՖՀ-ում սոցիալ - քաղաքական վեպի ժանրի վերածննդին:

Հ.Վ. Ռիխտերը և Ա.Անդերշը հանդիսացան նորաստեղծ արևմտագերմանական գրականության հիմնական գաղափարախոսները: Նրանք մեծապես ազդեցին այդ երիտասարդ գրականության կայացման, նրա նոր գաղափարական ուղենիշների և նոր գեղարվեստական ձևերի որոնման գործում: Այս շրջանում է, որ հրապարակախոսական և լրագրողական ոճը միաձուլվում է գեղարվեստական գրականության հետ:

Ռիխտերի գեղարվեստական համակարգի մեջ առանձնակի տեղ է գրավում «փոքր մարդու» խնդիրը: Հեղինակը միտումնավոր կերպով կանգ չի առնում այս կամ այն կերպարի անհատական բնութագրի ներկայացման վրա, քանի որ նրա հիմնական նպատակը՝ «փոքր մարդու» հավաքական կերպարի պատկերումն է, որը խորհրդանշում է անդեմ զանգված, հասարակ մարդկանց: Սրանով է բացատրվում պատկերային միջոցների ընդգծված սղությունը, «ժլատությունը»:

9. Ռիխտերի վաղ ստեղծագործության վերլուծությունը ցույց է տալիս նրա պոետիկայի առանձնահատկությունները. հեղինակի գեղագիտության մեջ ակնհայտ է նրա հակումը «գրականության անտառահատման» սկզբունքի հանդեպ: Նա փոխում է թեմատիկ դաշուն՝ առանց նախորդ գրական փորձի վրա հենվելու: Հեղինակը միաձուլում է գրական ստեղծագործությունը՝ ռեպորտաժի (լրահաղորդումի), հրատապ հաղորդագրության, լրագրողական ժանրի հետ: Երբեմն նրա ստեղծագործությունների վերլուծության ժամանակ դժվար է լինում տարանջատել գեղարվեստական և փաստագրական, հրապարակախոսական նյութերը:

«Ջախջախվածները» ստեղծագործությունը քաղաքական վեպի ժանրի հիմք դրեց ՉՖՀ-ի գրականության մեջ: Նյութի և թեմայի հրատապությունը, նրա արդիականությունը թելադրեցին հեղինակին «գեղարվեստականացված» լրահաղորդման յուրահատուկ ժանրը, որտեղ բառապաշարը շատ սուղ էր, ժլատ, սեղմ: Փոխարենը վեպն՝ ինչպես և այդ շրջանի բոլոր գործերն, առատ են աշխույժ երկխոսություններով, լրագրողական թեժ հարցազրույցներ հիշեցնող դրվագներով: Փաստերի չոր շարադրանքը, որը երբեմն փաստագրական հաշվետվություն է հիշեցնում, զուգակցված լայնածավալ երկխոսությունների հետ, առանց հեղինակային մեկնաբանության: Այս ամենը որոշ չափով հիշեցնում է Հեմինգուեյի ոճը: Այս առումով անհրաժեշտ է հիշել, որ այս ստեղծագործությունները սկիզբ առան ամերիկյան ռազմաճամբարում գերության տարիներին, և այդ ազդեցությունը շատ օրինաչափ էր: Այսպիսով, կարող ենք ասել, որ Հանս Վերներ Ռիխտերը հիմք դրեց նորագույն շրջանի գերմանական քաղաքական վեպին, որը մեծ դեր խաղաց ազգի համար այդ դժվարին պատմական փուլում և նպաստեց արևմտագերմանական գրականության մեջ այդ ժանրի հետագա զարգացմանը:

#### ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. «47-ի խմբի» հիմնադրումը և Հ.Վ. Ռիխտերի ստեղծագործական գործունեության սկիզբը, Գրական - գեղարվեստական, հասարակական - քաղաքական անկախ ամսագիր «Գարուն», «ԷԳԵԱ» հրատ., Երևան 2012, N. 5-6, էջ 80-85:
2. Հ. Վ. Ռիխտերի «Ջախջախվածները» վեպի ծրագրային բնույթը «Համատեքստ» գիտական հոդվածների ժողովածու, «ԵՊՀ» հրատ., Երևան 2012, էջ 334-341:
3. «47-ի խմբի» գաղափարախոսական սկզբունքների արտացոլումը Ալֆրեդ Անդերշի վեպերում, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու 2 (55), «Ասողիկ» հրատ., Երևան 2013, էջ 9-14:

Вардуш Ладиковна Макичан

#### Художественно-эстетическая концепция “Группы 47” и проза Ганса Вернера Рихтера

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07-“Зарубежная литература”  
 Защита состоится 20-ого декабря 2013г. В 12:30 на заседании специализированного совета 003 по Армянской и зарубежной литературе ВАК РА при Институте литературы имени М. Абегамяна НАН РА, По адресу: г. Ереван, ул. Г. Лусаворича 15.

#### РЕЗЮМЕ

Данная диссертация посвящена анализу художественно-эстетической концепции немецкого послевоенного литературного объединения-“Группы 47”, а также исследованию прозы Ганса Вернера Рихтера-основателя и вдохновителя этой группы.

Материалом исследования выбраны те произведения, которые были созданы авторами “Группы 47” в рамках деятельности этого литературного форума. Сюда входят и прозаические произведения Г.В.Рихтера. Все эти произведения, вместе взятые, наиболее полно отражают специфику художественной системы и мировосприятия нового, послевоенного поколения немецких писателей.

Во Введении приводится краткий очерк социально-политической и литературной ситуации, сложившейся в Германии после окончания Второй мировой войны, обосновывается выбор темы, степень её изученности, определяются цели и задачи исследования.

Первая глава диссертации посвящена исследованию основных тенденций развития послевоенной литературы Германии и литературно-историческим предпосылкам создания “Группы 47”. Исторически сложившаяся ситуация определила задачи новосозданной литературной группы: создание “когорты” талантливых писателей, которая своей литературной, публицистической и общественной деятельностью смогла бы отразить надежды и чаяния народа, стать его духовным лидером. Именно этих целей придерживались Г.В.Рихтер, А.Андерш, Г.Бёлль, П.Шаллок, В.Шнурре и другие активные члены “Группы 47”. Другой главной целью группы было привлечение в её ряды молодых талантливых авторов, которым предстояло открыть новую страницу в истории немецкой литературы.

Г.В.Рихтер и А.Андерш, закладывающие основы нового этапа литературы, не только разрабатывали концептуальные критерии и принципы литературной группы, но и создавали произведения, отражающие эту концепцию. На идейную направленность группы решительное воздействие оказали произведения В.Борхерта, которые были приняты писателями “Группы 47” как программные. Произведения В.Борхерта стали образцом не только в идейно-содержательном, но и в тематическом, композиционном и стилистическом плане. Анализ сюжетных линий произведений В.Борхерта и А.Андерша свидетельствует о том, что большинство их героев “сломлены” войной, они не в состоянии вынести подобное психическое и физическое испытание. В отличие от героев Г.Бёлля, они не стоят

перед моральным выбором, так как почти во всех этих произведениях мы видим не саму войну, а только его “результаты” и его отголоски. Моральная сторона для героев В. Борхерта и А.Андерша заключается в том, смогут ли они, по возвращении домой, выдержать уже второй - морально-психологический удар, когда их встречают одни развалины и физически или морально искалеченные люди, из тех, кто остался в живых. Когда приходит осознание бессельно и бессмысленно утраченной молодости, трагически-безвыходной ситуации в настоящем, и отсутствия каких-либо надежд на будущее.

Вторая глава диссертации исследует отражение художественно-эстетических проблем “Группы 47” в произведениях писателей-членов группы. Если В.Борхерт, Г.В.Рихтер и А.Андерш закладывали основы литературной и общественно-политической деятельности “Группы 47”, то такие писатели, как Г.Бёлль, П.Шаллюк, В.Шнурре, Г.Грасс развили программные положения Группы, продолжили художественно-эстетические искания своих предшественников и намного расширили, как тематический круг художественного осмысления недавнего прошлого, так и моральные критерии оценки настоящего. На примере уже ранних произведений Г. Бёлля мы прослеживаем поиск автором новых путей и новых художественно-стилистических средств, для адекватного отражения истинного положения дел в послевоенной Германии. В исследовании делается попытка выделения отдельной линией проблем “маленького человека”, которые являются главными в произведениях Г. Бёлля и других писателей группы.

Ирония и гротеск в прозе Шаллюка чаще всего носит собирательный характер. Этим объясняется тот факт, что во многих своих рассказах автор избегает характеристик своих персонажей, а в некоторых даже оставляет их безымянными. Это собирательные образы немцев, которые, вместе взятые, образуют ту безликую массу, то бездушное общество, с которым не могут смириться герои его произведений.

В. Шнурре, рассказы которого отличаются богатством языка и стилевых решений, констатирует моральную и духовную “смерть” немецкого общества. Анализ малой прозы В.Шнурре, также, как и его “собрата по перу” –В.Колбенхофа приводит к выводу, что авторы часто безжалостно осуждают “средних”, простых немцев, которые по тем или иным причинам стали марионетками в руках нацистов. На основе анализа произведений Г.Грасса, мы показываем беспочвенность утверждений, что в его произведениях отсутствуют прямые, “адресные” обвинения против основных виновников войны. Детальное исследование приводит к выводу, что обвинения эти завуалированы в глубинных слоях его фантазмагоричных и гротескных образов.

Третья Глава исследует творчество основателя “Группы 47” Ганса Вернера Рихтера, как основоположника немецкого политического романа. По ходу этого анализа выявляются особенности его поэтики. Это в первую очередь переход на новое тематическое “поле”, не имея при этом опоры подобного литературного прецедента. Автор сопрягает литературное произведение с политическим репортажем, вплетая фактический материал актуальной публицистики в общую ткань художественного произведения, и делает это настолько мастерски, что часто представляется невозможным провести грани между ними. Его произведение “Разгромленные” заложило основу немецкого политического романа. Скудность и

сжатость лексики романа продиктованы желанием автора придать произведению форму актуального репортажа, “фронтовых сводок”. “Отсутствие” авторской позиции, “сухая” констатация фактов напоминают о том, что роман был зачат ещё в американском плену и влияние американской “школы” повествования в данном случае очевидно. Однако в плане идейного содержания, тематического и стиливого своеобразия романы “Разгромленные” и “Не убий” – это новая страница в истории немецкого романа, а всё творчество Г.В.Рихтера – один из краеугольных камней не только послевоенной немецкой литературы, но и вновь зарождающейся литературы ФРГ.

### Artistic and Aesthetic idea of "Group 47" and Hans Weber Richter's Prose

Dissertation applying for the scientific degree of philological science, specialty 10.01.07 – "Foreign Literature".

The defence of the dissertation will take place on December 20, 2013, at 12:30, at the Specialized Council of Armenian and Foreign Literature 003 at the Institute of Literature after M. Abeghyan NAS RA. Address: 15 Grigor Lusavorich str., Yerevan, RA.

#### Summary

The thesis under consideration is devoted to the analysis of the artistic and aesthetic idea of the German postwar literary union "Group 47", as well as to the research of the prose by Hans Weber Richter – the founder and inspirer of the group.

The dissertation studies the works created by the authors of "Group 47" in the framework of the activities of this literary forum, the goal of which was to inform and teach the German public about democracy after the Hitler era. Group 47 were concerned with reestablishing the broken traditions of German literature. Feeling that Nazi propaganda had corrupted their language, they advocated a style of sparse, even cold, descriptive realism devoid of pompous or poetic verbiage.

The thesis also includes the prose work by H.W. Richter. All these works taken together fully mirror the specific character of the artistic system and the world-view of the new postwar generation of German writers.

**The Introduction** defines the subject of the study, dwells upon its urgency and points out the problems of the research. It gives a brief survey of the social-political and literary situation in Germany after the end of the Second World War.

**Chapter I** of the dissertation is devoted to the study of the main tendencies of development in German postwar literature and the literary and historical background for the creation of "Group 47". The historically established situation defined the problems of the newly created literary group: the creation of a "cohort" of talented writers, who through their literary, journalistic and public activities would be able to reflect the expectations and aspirations of the nation, to become its spiritual leader. This very goal was pursued by H.W. Richter, A. Andersch, H. Böll, P. Schallük, W. Schnurre and other active members of "Group 47". Another main goal of the group was to attract young talented writers, who had to break new ground in the history of German literature.

H.W. Richter and A. Andersch, who laid the foundations of the new phase in literature, not only worked out conceptual criteria and the principles of the literary group, but also created works that reflected that concept. The ideological orientation of the group was greatly influenced by W. Borchert's works, which were accepted by the writers of "Group 47" as programmatic. W. Borchert's works came to be considered a model not only in ideological-substantial, but also in thematic, compositional and stylistic sense. The analysis of the plot in W. Borchert's and A. Andersch's works testifies that the majority of their heroes are "crushed" by the war; they are not able to stand such mental and physical ordeals. A. Andersch often raised questions about the free will of the individual as a central theme. Unlike H. Böll's heroes, they are not facing a moral choice, as in almost all these works we can see the "outcome" of the war and its echo rather than the war itself. The moral aspect for W. Borchert's and A. Andersch's heroes is whether they can, on coming back home, overcome the second – moral and mental – blow when they are welcome by ruins and physically or mentally crushed people among those who survived. When there is awareness of the lost youth being aimless and pointless, the tragic and desperate situation at present and lack of any hope for the future.


**Chapter II** of the dissertation studies the reflection of artistic and aesthetic problems of "Group 47" in the works of writers – members of the group. If W. Borchert, H.W. Richter and A. Andersch lay the foundation for the literary, social and political activities of "Group 47", then H. Böll, P. Schallük, W. Schnurre, G. Grass developed the programmatic propositions of the Group, continued the artistic and aesthetic quest of their predecessors, and significantly expanded the thematic circle of the artistic understanding of the immediate past, as well as moral criteria for the assessment of the present. By the example of the early works by H. Böll we can trace the search for new ways and new artistic and stylistic means for adequate reflection of the true situation in the postwar Germany. H. Böll's villains are the figures of authority in government, business and in the Church, whom he castigates, sometimes humorously, sometimes acidly, for what he perceived as their conformism, lack of courage, self-satisfied attitude and abuse of power. His works have been dubbed "the literature of the rubble". He was a leader of the German writers who tried to come to grips with the memory of World War II, the Nazis, the Holocaust and guilt that came with them. He seemed to portray the dark side of capitalism in his works. The research makes an attempt to mark out the problems of "a humble man", which are fundamental in the works by H. Böll and other writers of the group.

Irony and grotesque in Schallük's prose are mainly of generalized nature. This accounts for the fact that in most his stories the author avoids the description of his characters, moreover, in some works they are left nameless. These are the

generalized images of the Germans, who, taken together, make up the featureless masses and the soulless society which the heroes of his works fail to put up with.

W. Schnurre, whose stories are notable for the richness of language and variety of styles, ascertains the moral and spiritual "demise" of the German society. The analysis of light prose by W. Schnurre as well as by his "brother of the quill" W. Kolbenhoff leads to the conclusion that authors often ruthlessly blame "average", ordinary Germans, who, for some reason or other, became puppets in Nazi hands. On the basis of analysis of G. Grass's works we can claim the groundlessness of assertion that his works lack direct and straight, "addressed" accusations against the main culprits of the war. The detailed study leads to the conclusion that these accusations are concealed in the deep layers of his phantasmagoric and grotesque characters.

**Chapter III** studies the works by Hans Weber Richter, the founder of "Group 47" and the initiator of the German political novel. The peculiarities of his poetics are revealed in the course of this analysis. First of all, it is a transition to a new thematic "field" with the lack of similar literary precedent. The author joins the literary work with a political reporting, entwining the real matter of urgent political journalism with the general fabric of an artistic work. He does this in such a masterly fashion that it seems impossible to draw a distinction between them. His work "The Defeated", being one of the first important antiwar works of West German literature, laid the foundations for the German political novel. Scantiness and conciseness of the novel's vocabulary show the author's desire to impart to the work a form of urgent reporting, "Front report". "Lack" of author's attitude and "dry" statement of facts remind us about the fact that the novel was conceived still in American captivity, and the impact of American "school" of narration is obvious in this case. However, in the sense of ideological content, thematic and stylistic peculiarities, the novels "The Defeated" and "Thou shalt not kill" present a new page in the history of the German novel, and all the works by H.W. Richter represent one of the cornerstones not only in the postwar German literature, but the newly emerging literature as well.



ՀՀ Ազգային գրադարան



NL0550969

